Վերապատրաստող կազմակերպություն

ՀՀ ԿԳՄՍՆ <<ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ>>ՊՈԱԿ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Արժեքային համակարգի ձևավորումը՝ տարբեր մեթոդներով

ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ՝ Վարդենիս

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԲԵՅԲՈՒԹՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ՈՒՍՈՒՑԻՉ՝ Քնարիկ Ասատրյան

ԴՊՐՈՑ՝ Գեղամասարի միջնակարգ դպրոց

Վարդենիս-2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն…….3
2. Գրական ակնարկ…….4
3. Խմբի նկարագիր ……6
4. Փորձարարական դաս-1……7
5. Փորձարարական դաս-2…….. 7
6. Եզարկացություն…… 9
7. Գարականության ցանկ ……13
8. Դասապլան-1…… 16
9. Դասապլան-2……21

Ներածություն

Թեման արդիական է ու ժամանակակից:«արժեհամակարգ» ասվածը շատ լայն հասկացություն է և դրա մեջ ներառված են բարոյական մի շարք հատկանիշներ:Արժեհամակարգի ձևավորումը իրենից ներկայացնում է դժվարին,համբերատար աշխատանք:

Ուսուցման գործընթացի դաստիարակչական ներգործության հարուստ աղբյուր է բուն գործընթացի բովանդակությունը, որովհետև ընտրելով դաստիարակչական առումով հիմնական գաղափարները, օրենքները և հասկացությունները՝ ուսուցիչը հնարավորություն է ստանում առարկայական ծրագրերի բովանդակության յուրացման միջոցով աշակերտների մեջ սերմանել քաղաքական, իրավական, բարոյական, գեղագիտական, բնապահպանական և այլ գիտելիքներ ու վերաբերմունք: Կրթության բովանդակության հետ միասին ուսուցման մեթոդները ներգործում են աշակերտների ճանաչողական ունակությունների վրա՝ նրանց հնարավորություն տալով ստացած գիտելիքները կյանքում օգտագործելու ըստ նպատակի:Ուսումնառության ընթացքում սոցիալական նպատակները ներառում են բոլոր անհրաժեշտ կոմպետենցիաները՝մշակութային,սոցիալական,խոսքային-լեզվական,գիտելիքի ժողովրդավարական և այլն:Ուսուցիչը դասաժամին պետք է հետևի,որ ուսումնական և դաստիարակչական աշխատանքները մեկտեղվեն,համընթաց զարգացում ապրի և այստեղ շատ կարևոր է,որ ուսուցչի աչքը լինի ամենատես,հոգին լինի ամենազգաց,իսկ միտքը՝ամենաընթաց:

Ես. որպես պատմության ուսուչուհի, սեփական փորձով կարող եմ հավաստել, որ աշակերտի արժեհամակարգը պետք է ձևավորել ներդաշնակության սկզբունքով,համագործակցային ուսումնառություն մեթոդով.դասի ճիշտ կազմակերպման համար անհրաժեշտ է ճիշտ պլանավորում:

Արժեքների բուրգի գագաթին գտնվող նվիրական ու մեծագույն արժեքի՝ հայրենասիրության զգացումը դաստիարակելու համար հայոց պատմության դասընթացը բազմաթիվ հիանալի հնարավորություններ է ընձեռում: Կարելի է,

դիցուք, հիշատակել Ռաֆֆու «Սամվել» վեպը,արժևորում ենք հայրենիքը :Հայրենասիրությունն այն մեծագույն արժեքն է, որ հարգանք ու պատկառանք է հարուցում, նույնիսկ երբ դրսևորվում է հակառակորդի կամ թշնամու մոտ: Ուսուցչի քաղաքացիական դիրքորոշումը, ձգտումը՝ դաստիարակել բարձր արժեքներ կրող քաղաքացիներ, նրա մտահորիզոնը, հասարակական լայնախոհությունը, սերը երեխաների նկատմամբ ուսումնական գործընթացի արժեքային դաստիարակչական ներգործության բարձրացման կարևոր պայմաններից են: Ընդ որում՝ դաստիարակչական խնդիրների լուծումը պայմանավորված է նաև նրանով, որ ուսուցիչը համագործակցային փոխհարաբերությունների միջոցով նախատեսում է աշակերտների ոչ միայն մտավոր, այլև բարոյական, գեղագիտական ու ֆիզիկական դաստիարակության խնդիրների նկատմամբ համակողմանի մոտեցում: Ուսուցման գործընթացում լուծվում են սովորողների կրթական, դաստիարակչական կամ արժեքային և ընդհանուր զարգացման խնդիրները: Դրա համար յուրաքանչյուր դասի դաստիարակչական խնդիրների լուծումը նախատեսում է ոչ թե մեկուսացված կամ առանձին մոտեցում, այլ գիտելիքների ու կարողությունների, արժեքային որակների, կամքի, բնավորության, զգացմունքների, հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում:

Գրական ակնարկ

Ժամանակակից

մանկավարժության մեջ մեթոդների դասակարգման տարբեր սկզբունքներ կան:

Ուսուցման մեթոդները պայմանականորեն կարելի է ներկայացնել երկու խոմբով՝

ավանդական և նոր կամ ժամանակակից: Մեթոդները բաղկացած են հնարներից և

վարժություններից:

Խոսքային և համագործակցային մեթոդներ

«Պատմել» - այս մեթոդը կիրառվում է ուսուցման բոլոր փուլերում: Պատմելը սկսվում է

ներածությունով և ավարտվում ամփոփումով: Ծարադրվում կամ պատմվում է

ուսումնական նյութի բովանդակությունը՝ խստագույնս պահպանելով

սիստեմատիկության և հաջորդականության սկզբունքը: Պատմելու ընթացքում

վարպետորեն առանձնացվում է նյութի գլխավոր տարրերը.հիմնականում կիրառվում է դպրոցական ուսուցմանընթացքում:

«Մտագրոհ»– խմբային աշխատանքի պարզագույն, բայց շատ

արդյունավետ մեթոդ է: Այս մեթոդը մտքերի տարափ են անվանում, քանի որ հաճախ

խրախուսվում են պարզապես ուսումնասիրվող նյութին այս կամ այն կերպ առնչվող

բառեր թվարկելն ու գաղափարներ արտահայտելը: Խմբի անդամների միջև կոնկրետ

խնդիր է դրվում. նրանցից յուրաքանչյուրն արտահայտում է սեփական տեսակետները՝

առանց որևէ մեկնաբանության կամ գնահատական տալու փորձի:

«Վենի դիագրամ» - այս մեթոդը կարելի է օգտագործել նյութի ամփոփման և

ընդհանրացման ժամանակ՝ գաղափարները, երևույթները, անձերին միմյանց հակադրելու

կամ դրանց ընդհանրությունները ցույց տալու նպատակով:

«Վեբ-որոնում» - հետազոտության վրա հիմնված ուսումնական գործունեություն է,

որի ընթացքում սովորողների ձեռք բերած գիտելիքները, տեղեկատվությունը

հիմնականում ստացվում են ինտերնետային աղբյուրներից՝ կայքեր,

հանրագիտարաններ, ուսումնական ռեսուրսներ, գրադարաններ, ֆորումներ:

«Դեպքի ուսումնասիրություն» - մեթոդը համեմատաբար նոր է: Դրա կիրառման

ժամանակ մասնակիցներին ներկայացվում է իրական կամ երևակայական

իրավիճակների (հանգամանքների, դեպքերի, դիպվածների) մի շարք, որի

ուսումնասիրման, քննարկման, վերլուծության ուղղությամբ այնուհետև անհրաժեշտ է

լինում տևական աշխատանք կատարել:

Ուսուցիչը միանգամից, մի դասի ժամանակ չի կարող օգտագործել մեթոդների հարուստ զինանոցը:Նա պետք է որոշակի դասի համար կատարի ուսուցման մեթոդի, հնարի ընտրություն:Ուսուցման մեթոդի հիմքում ընկած են այն խնդիրները, որոնք լուծվում են դասի ժամանակ կամ դասի որոշակի փուլում. բացի դասի նպատակից ու խնդիրներից, մեթոդների ընտրությունը կախված է նաև՝ դասի տիպից ու կառուցվածքից, ուսումնական նյութի բովանդակությունից, աշակերտների տարիքից, դասարանում աշակերտների թվաքանակից, պատրաստվածության մակարդակից, շահագրգռվածությունից ու հետաքրքությունից, ուսումնադիտողական պարագաների առկայությունից, ժամաքանակից, ուսուցչի պատրաստվածության մակարդակից և այլ գործոններից

Խմբի նկարագիր

Ես իմ հետազոտական աշխատանքը անցկացրել եմ Գեղարքունիքի մարզի Գեղամասար գյուղի միջնակարգ դպրոցի 8-րդ,7-րդ դասարանում, որոշեցի պատմել և զույգերով աշխատանք զուգակցված մեթոդ ի կիրառմամբ սովորողներին ներգրավել դասապրոցեսին,ինչը նպաստեց նաև արժեքային համակարգի ձևավորմանը:Դասարանում սովորողները ունեին տարբեր առաջադիմություն և հմտություններ: Հայոց պատմությունը տրված էր շաբաթական 2 դասաժամ և դասացուցակում այն տեղադրված էր վերջին ժամերին:Այս դասարանում որոշեցի դաս անցկացնել պատմել և զույգերով

աշխատանք զուգակցված մեթոդով և ուզում էի հասկանալ յուրաքանչյուր աշակերտի ունեցած հմտությունն ու կարողունակությունը առարկայից:Այս դասարանի հիմնական խնդիրն էր աշակերտների ներգրավվածությունը դասապրոցեսին ,ինչը պատճառ դարձավ,որ ես իմ հետազոտական աշխատանքը իրականացնեմ:

Փորձարարական դաս 1

Առարկա՝ Հայոց պատմություն

Դասարան՝ 8 – րդ

Դասի թեման՝ Հայկական գաղթավայրեր նոր շրջանում

Դասի տիպը՝ համակցված

Դասի նպատակը՝

. Իմանան որո՞նք են հայկական գաղթավայրերի առաջացման պատճառները:

. Ի՞նչ է գաղութը:

. Ո՞ր երկրներում էին հաստատվում հայերը միջնադարում և նոր ժամանակներում:

Դասի ընթացքը՝

Խթանում . ֆրոնտալ հարցում

1. Որո՞նք են հայկական գաղթավայրերի առաջացման պատճառները:

2. Ի՞նչ է գաղութը:

3.Թվարկե՛լ հայկական հիմնական գաղթավայրերը:

Իմաստավորում՝

Նոր նյութի վերաբերյալ ցուցադրվեց սահիկ, որն առավել մանրամասն էր արտացոլում նյութի հիմնական բովանդակությունը: Սահիկը կապ հաստատեց հին ու նոր դասերի միջև:Աշակերտները մանրամասնորեն ուսումնասիրեցին Արևելքի և Արևմուտքի գաղթավայրերի մասին տեղեկությունները: Ուսումասիրելուց հետո նրանք ներկայացրեցին իրենց յուրացրած նոր տեղեկություններն ու համեմատեցին Արևելքի և Արևմուտքի գաղթավայրերի դերը հայապահպանման գործում: Ստեղծվեց միջառարկայական կապ Աշխարհագրություն և Հայոց պատմություն առարկաների միջև: Աշակերտները քարտեզի վրա ցույց տվեցին այն երկրներն, որտեղ ձևավորվել են հայկական գաղթօջախներ:

Կշռադատում՝

Սեփական տեսակետն արտահայտեցին արտագաղթի, ներգաղթի և հետգաղթի մասին: Սկսվեց քննարկում ուսուցչի մասնակցությամբ:

Գնահատում

Տնային աշխատանք՝ Պատմել, պատասխանել դասի վերջին հարցերին:

Դասը վարեցի ԽԻԿ համակարգով:Դասաժամն սկսվեց տնային աշխատանքի ստուգումով. բոլորը ներկայացրեցին իրենց աշխատանքները,քննարկվեց, տրվեց բանավոր հետադարձ կապ:Կատարեցի անդրադարձ

Փորձարարական դաս-2

Առարկա՝ - Հայոց պատմություն

Դասարան՝ 7-րդ

Թեմա՝ Հայկական պետականության առաջացումը Կիլիկիայում

ԴԱՍԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Սովորողները՝

* կիմանան Կիլիկիայում հայկական իշխանության ստեղծման նախադրյալները,

* պատկերացում կունենան Կիլիկիայի աշխարհագրական դիրքի և հայերի այնտեղ տեղափոխվելու պատմական պատճառների մասին,

* Ռուբեն իշխանի կողմից 1080թ. Հայկական իշխանության ստեղծման մասին,

* կկանողանան քարտեզի վրա ցույց տալ Կիլիկիայի տեղը, ներկայացնել նրա բնակլիմայական պայմանները,

* կկարողանան թվարկել դասում օգտագործված հիմնական անունները,

* կկարողանան բացատրել օգտագործված եզրերը և հասկացությունները,

* կպարզաբանեն Կիլիկիայում հայերի բնակության պատճառները և հետևանքները,

* կարժևորեն բուն հայրենիքից հեռու միավորման և անկախ պետություն ստեղծելու ձգտումը:

ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔԸ

Կազմակերպչական մաս- սովորողների հաշվառում, անհրաժեշտության դեպքում՝ վերադասավորում:

Խթանման փուլ

Գրատախտակին գրել "Կիլիկիա" առանցքային բառը և " Մտագրոհ" մեթոդի կամ "Պրիզմա" վարժության միջոցով փորձել վերհանել սովորողների նախնական գիտելիքները Կիլիկիայի վերաբերյալ: Ընդ որում՝ դրանք կարող են տարաբնույթ լինել՝ սկսած "Կիլիկիա" առագաստանավից մինչև "Կիլիկիա" գարեջուր:

Վարժությունը կատարելուց հետո ուսուցիչը փոքրիկ տեղեկություններ է տալիս Կիլիկիայի մասին, ի մի բերում նախկինում նրանց սովորածը և քարտեզի վրա ցույց տալիս Կիլիկիայի տեղը:

Իմաստի ընկալման փուլ

Նախապես՝ կազմակերպչական մասի ընթացքում, դասարանը բաժանվում է 3 հոգանոց խմբերի՝ ըստ դասի ենթավերնագրերի: Համագործակցային խմբերին հանձնարարվում է կիրառել "Փոխադարձ ուսուցում" մեթոդը, սովորել և միմյան ներկայացնել դասը: Երեքից մեկը ներկայացնում է առաջին հատվածը, մյուս երկուսը, որ կարդացել էին տվյալ հատվածը, հարցեր են տալիս զեկուցողին, միասին քննարկում և աշխատանքային տետրերում դուրս գրում հատված կարևոր թվականները, անունները և իրադարձությունները: Գործընթացը կրկնվում է դասանյութի հաջորդ հատվածների համար:

Կշռադատման փուլ

Ամբողջ դասարանով ուսուցչի ընտրությամբ սովորողները կատարում են " Կմախք" կամ "Քառաբաժան" վարժությունները: Սովորողները գնահատվում են:

Անդրադարձ

Վերջին հինգ րոպեի ընթացքում ուսուցիչը հարցերով ամփոփում է դասը և հանձնարարում տնային առաջադրանք:

Կիրառվող մեթոդներ, հնարներ

Փոխադարձ ուսուցում, զննականություն, բանավոր շարադրանք. մտագրոհ, պրիզմա, կմախք, քառաբաժան:

Դասի տիպը

Նոր նյութի հաղորդման , համակցված դաս:

Միջառարկայական, ներառարկայական կապեր

"Հայրենագիտություն", "Համաշխարհային պատմություն", "Աշխարհագրություն", "Հայոց եկեղեցու պատմություն":

Ուսումնական նյութեր

Քարտեզ, դասագիրք, նկարներ, աշխատանքային տետր:

Հաջորդ դասի թեման,որ վերցրել էի նորից հայոց պատմություն առարկան .այս անգամ վերցրել էի հարցադրումներ և պատմել զուգակցված մեթոդը: Նոր դասը սկսվեց տնային աշխատանքի ստուգումով, ինչին հաջորդեց նախորդ թեմային անդրադարձը: Դասի ընթացքում համագործակցված աշխատեցին բոլոր աշակերտները, անցած թեմաներն ամրապնդելու համար օգտագործեցի պատմել մեթոդը, որի ընթացքում տվեցի ուղղորդող հարցադրումներ :Աշակերտները նշեցին, որ այս ոճի դասի անցկացումը իրենց դուր եկավ, քանի որ այսպիսի դասերը ավելի արդյունավետ են, քանի որ ստանում են ինչպես նոր գիտելիք, այնպես էլ ամբողջ դասարանն է մասնակցում դասապրոցեսին՝ ապահովելով ամբողջ դասարանի ներգրավվածությունն ու մասնակցությունը:Թեման ամփոփելու համար անդրադարձ կատարվեց,գնահատվեցին աշակերտները և հանձնարարվեց տնային աշխատանք:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Աշակերտների ներգրավվածությունը ապահովելու համար՝ անցկացվեց 2 տարբեր զուգակցված մեթոդներով դասեր, որոնց ընթացքում ցածր առաջադիմություն ունեցող աշակերտները կատարեցին անհատական առաջադրանքներ , կարողացան վերարտադրել յուրացրած նյութը: Ամեն հաջորդ դասաժամին ամբողջ դասարանի համար կատարվեց քննարկում. քննարկվեց,տրամադրվեց բանավոր և գրավոր հետադարձ կապ: Իմ ուշադրության կենտրոնում եմ պահել հիմնականում միջին և ցածր առաջադիմություն ունեցող աշակերտներին, որն էլ պատճառ հանդիսացավ մնրանց ներգրավվածությանը դասապրոցեսին, ինչպես նաև նրանց հնարավորություն տրվեց ձեռք բերել ինքնուրույն աշխատելու հմտություն:Աշակերտների նեգրավվածությունից զատ հետևեցի յուրաքանչյուրի

արտահայտած ինքնուրույն մտքերին,փոխօգնությանը,սեփական դատողություններին: Նրանք ոչ միայն մտապահում էին թեման,այլ ներթափանցում բուն նյութի իմաստի մեջ,կարողանում էին վերլուծել,եզրահանգումներ անել,մեկնաբանել և գնահատել:

Գրականության ցանկ

Մ. Մանուկյան, Մեթոդական աշխատանքը դպրոցում, ձեռնարկ

Դասապլան**-1**

Ուսուցիչ՝ Քնարիկ Ասատրյան

Առարկա՝	Հայոց պատմություն	Ամսաթիվ		Կիսամյակ	**I**	Դասարան	8
Թեմա՝	Հայկական գաղթավայրեր						
Օգտագործվող նյութեր՝	դասագիրք, տետր, A4 ֆորմատի թուղթ, գունավոր գրիչներ, սահիկահանդես						

Դասի նպատակը՝	1.Ստուգել և գնահատել աշակերտների գիտելիքները 2. . Իմանան որո՞նք են հայկական գաղթավայրերի առաջացման պատճառները: 3. Ի՞նչ է գաղութը: 4. Ո՞ր երկրներում էին հաստատվում հայերը միջնադարում և նոր ժամանակներում:

Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ

Վերջնարդյունքները Աշակերտները կկարողանան.

Ներկայացնել հայկական գաղթավայրերի առաջացման պատճառները:

Արժևորել հայկական գաղթավայրերը:

Գործողություններ(ժամ /տևողություն)	Ուսումնական գործունեություն Աշակերտներ	Ուսումնական գործունեություն Ուսուցիչ	Հարցադրումներ	Կիրառվող մեթոդ(ներ)
5րոպե- սկիզբ 20ր	**Խթանման փուլ՝ Ֆրոնտալ հարցում** 1. Որո՞նք են հայկական գաղթավայրերի առաջացման պատճառները:2. Ի՞նչ է գաղութը:3.Թվարկե՛լ հայկական հիմնական գաղթավայրերը:	Ողջունել դասարանին, ն/բ: Ստուգել տնային աշխատանքները	որո՞նք են հայկական գաղթավայրերի առաջացման պատճառները: Ի՞նչ է գաղութը: Ո՞ր երկրներում էին հաստատվում հայերը միջնադարում և նոր ժամանակներում:	Կարճ դասախոսության մեթոդ

	Իմաստի ընկալման փուլ՝ Նոր նյութի վերաբերյալ ցուցադրվեց սահիկ, որն առավել մանրամասն էր արտացոլում նյութի հիմնական բովանդակությունը:Սահիկը կապ հաստատեց հին ու նոր դասերի միջև:Աշակերտները մանրամասնորեն ուսումնասիրեցին Արևելքի և Արևմուտքի գաղթավայրերի մասին տեղեկությունները: Ուսումասիրելուց հետո նրանք ներկայացրեցին իրենց յուրացրած նոր			Խմբային աշխատանք մեթոդ

	տեղեկություններն ու համեմատեցին Արևելքի և Արևմուտքի գաղթավայրերի դերը հայապահպանման գործում: Ստեղծվեց միջառարկայական կապ Աշխարհագրություն և Հայոց պատմություն առարկաների միջև: Աշակերտները քարտեզի վրա ցույց տվեցին այն երկրներն, որտեղ ձևավորվել են հայկական գաղթօջախներ:			

Անդրադարձ Գնահատում **10-15ր**		Աշակերտները կներկայացնեն Հայկական գաղթավայրեր : Գնահատել աշակերտների պատասխանները:	մեթոդ
Պատմել, պատասխանել դասի վերջին հարցերին: 5ր			

Դասապլան**-2**

Ուսուցիչ՝ Քնարիկ Ասատրյան

Առարկա՝	Հայոց պատմություն	Ամսաթիվ		Կիսամյակ	**I**	Դասարան	7-ր դ

Թեմա՝	Հայկական պետականության առաջացումը Կիլիկիայում

Օգտագործվող նյութեր՝	Քարտեզ, դասագիրք, նկարներ, աշխատանքային տետր:
Դասի նպատակը՝	Սովորողները՝ կիմանան Կիլիկիայում հայկական իշխանության ստեղծման նախադրյալները, պատկերացում կունենան Կիլիկիայի աշխարհագրական դիրքի և հայերի այնտեղ տեղափոխվելու պատմական պատճառների մասին

Աշակերտը կկարողանան քարտեզի վրա ցույց տալ Կիլիկիայի տեղը,
ներկայացնել նրա բնակլիմայական պայմանները,
կկարողանան թվարկել դասում օգտագործված հիմնական անունները,
կկարողանան բացատրել օգտագործված եզրերը և հասկացությունները,
կպարզաբանեն Կիլիկիայում հայերի բնակության պատճառները և հետևանքները

Գործողություններ(ժամ /տևողություն)	Ուսումնական գործունեություն Աշակերտներ	Ուսումնական գործունեություն Ուսուցիչ	Հարցադրումներ	Կիրառվող մեթոդ(ներ)

3-5ր 22-25ր	**Խթանման փուլ** Գրատախտակին գրել "Կիլիկիա" առանցքային բառը և " Մտագրոհ" մեթոդի կամ "Պրիզմա" վարժության միջոցով փորձել վերհանել սովորողների նախնական գիտելիքները Կիլիկիայի վերաբերյալ: Ընդ որում՝ դրանք կարող են տարաբնույթ լինել՝ սկսած "Կիլիկիա" առագաստանավից մինչև "Կիլիկիա" գարեջուր: **Իմաստի ընկալման փուլ** Նախապես՝ կազմակերպչական մասի ընթացքում, դասարանը բաժանվում է 3 հոգանոց խմբերի՝ ըստ դասի ենթավերնագրերի: Համագործակցային խմբերին հանձնարարվում է կիրառել "Փոխադարձ ուսուցում" մեթոդը, սովորել և միմյան ներկայացնել դասը: Երեքից մեկը ներկայացնում է առաջին	Վարժությունը կատարելուց հետո ուսուցիչը փոքրիկ տեղեկություններ է տալիս Կիլիկիայի մասին, ի մի բերում նախկինում նրանց սովորածը և քարտեզի վրա ցույց տալիս Կիլիկիայի տեղը:	Որոնք են բայական անդամի լրացումները: Ինչ են ցույց տալիս բայական անդամի լրացումները .ինչ տեսակների են բաժանվում:Ինչ են ցույց տալիս պարագաները և ինչ տեսակների են բաժանվում:Ինչ հարցերի են պատասխանում պարագաները:	Փոխադարձ ուսուցում, զննականություն, բանավոր շարադրանք. մտագրոհ, պրիզմա, կմախք,

10-15ր	հատվածը, մյուս երկուսը, որ կարդացել էին տվյալ հատվածը, հարցեր են տալիս զեկուցողին, միասին քննարկում և աշխատանքային տետրերում դուրս գրում հատված կարևոր թվականները, անունները և իրադարձությունները: Գործընթացը կրկնվում է դասանյութի հաջորդ հատվածների համար: **Կշռադատման փուլ** ● Ամբողջ դասարանով ուսուցչի ընտրությամբ սովորողները կատարում են " Կմախք" կամ "Քառաբաժան" վարժությունները: Այնուհետև կատարվում է անդրադարձ և գնահատում:	Սովորողները գնահատվում են:		քառաբաժան:

Տնային աշխատանք 5-10ր	Վարժություններ դասագրքից